

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2021թ-ի նոյեմբերի 5-ին ժամը 11:00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի շենքում (հասցե՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7) տեղի կունենան «Սևանի ջրավազանային կառավարման պլան»-ի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության Ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ (3-րդ փուլ): Լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են ստորև աղյուսակում.

N	ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ ծանուցվող տվյալների համար սահմանված պահանջներ	Նախատեսվող գործունեության և հանրային ծանուցման վերաբերյալ տեղեկատվություն
1.	Ձեռնարկող	«Ի ՄԻ Ի Քաուքազուս» ՍՊ ընկերություն
2.	Հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության իրականացման վայր	Սևանի ջրավազանային կառավարման տարածք
3.	Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցություն	Հայեցակարգային փաստաթղթի հնարավոր ազդեցությունը հիմնականում դրսևորվելու է ջրային ոլորտի և այդ ոլորտի հետ փոխկապակցված շրջակա միջավայրի բաղադրիչների վրա
4.	Փաստաթղթերին ծանոթանալու վայրը, օրը և ժամը	«Ի ՄԻ Ի Քաուքազուս» ՍՊ ընկերության գրասենյակ, ք. Երևան, Թումանյան փ. 8, 5-րդ հարկ, 504 սենյակ: 2021թ-ի հոկտեմբերի 18-ից նոյեմբերի 4-ը ներառյալ, աշխատանքային օրերին և ժամերին: Հեռ.՝ (+374 77)-38-28-82
5.	Դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու ժամկետը	10.11.2021թ, ժամը 18:00
6.	Քննարկումների պատասխանատուի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամար	<a href="mailto:eccecaucasus@gmail.com">eccecaucasus@gmail.com</a> (+374 77)-38-28-82